ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 2, 1959 Общественные науки

Ս. Շ. Զուրաբյան

ԿՈՄՈՒՆԻԶՄ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Վերջերս իր աշխատանքներն ավարտեց Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XXI արտահերթ պատմական համագումարը, որը գտնվում էր ոչ միայն սովետական երկրի, սոցիալիստական մյուս երկրների աշխատավորության, այլև ամբողջ աշխարհի մարդկության ուշադրության կենտրոնում։

XXI համագումարը, որը տևեց հունվարի 27-ից մինչև փետրվարի 5-ը, քննության առավ ընկեր Ն. Ս. Խրուշչովի «ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. կոնտրոլ թվերի մասին» զեկուցումը և այդ առթիվ ընդունեց բանաձև, ինչպես նաև հաստատեց ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. կոնտրոլ թվերը։

XXI համագումարը ամենաակնառու կերպով ցույց տվեց մեր պարտիայի, ամբողջ սովետական ժողովրդի կուռ միասնությունը լենինյան անհաղթ դրոշի ներքո։ Համագումարը միահամուռ կերպով դատապարտեց Մալենկովի, Կագանովիչի, Մոլոտովի, Բուլգանինի, Շեպիլովի հակապարտիական խումբը, որը ճգնում էր քայքայել պարտիայի միասնությունը, պարտիային և ժողովրդին շեղել լենինյան ուղուց, ձախողել XX համագումարի նշած կարևորագույն միջոցառումները կոմունիստական շինարարության ծավալման, միջազգային լարվածության թուլացման և խաղաղության գործի ամրապնդման հարցերում։

XXI համագումարը միաժամանակ դրսևորեց լիակատար գաղափարական միասնություն եղբայրական կոմունիստական և բանվորական պարտիաների հետ՝ մարքսիզմ-լենինիզմի, պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո։ Համագումարին ներկա էին 72 կոմունիստական և բանվորական պարտիաների դելեգացիաներ, որոնց ներկայացուցիչներից շատերը, ելույթ ունենալով, համագումարի ամբիոնից ջերմորեն իրենց բերկրանքն ու գոհունակությունը հայտնեցին ՍՍՌՄ յոթնամյա պլանի առթիվ՝ ընդգծելով նրա կարևորագույն նշանակությունը միջազգային կոմունիստական շարժման համար։

Նշելով 1957 թ. նոյեմբերին կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների կողմից ընդունված դեկլարացիայի, որպես մարքս-լենինյան պարտիաների միասնությունը ցուցաբերող պատմական մի փաստաթղթի մեծագույն նշանակությունը, համագումարը ընդգծեց ժամանակակից ռևիզիոնիզմի՝ կոմունիստական շարժման մեջ այդ գլխավոր վտանգի, մերկացման անհրաժեշտությունը, չթուլացնելով պայքարը նաև դոգմատիզմի և աղանդավորության դեմ։

XXI համագումարը խստորեն դատապարտեց ժամանակակից ռևիզիոնիզմի ամենացայտուն արտահայտությունը՝ հարավսլավական ռևիզիոնիզմը։ Ն. Ս. Խրուշչովի զեկուցման առթիվ համագումարի ընդունած բանաձևում ասված է. «Հարավսլավական ղեկավարության տեսությունը և պրակտիկան նշանակում են նահանջ բանվոր դասակարգի դիրքերից, միջազգային պրոլետա-

բական համերաշխության սկզբունքներից։ Հարավսլավիայի կոմունիստների միության ղեկավարների հայացքներն ու քաղաքականությունը հարվածի տակ են դնում Հարավսլավիայում ժողովրդական ռևոլյուցիայի և սոցիալիզմի նվաճումները»[1]։

* * *

Մինչև XXI պարտհամագումարը ընկեր Ն. Ս. Խրուշչովի զեկուցման թեզիսները լայն քննարկման ենթարկվեցին մամուլում, աշխատավորների ժողովներում, միութենական ռեսպուբլիկաների կոմունիստական պարտիաների համագումարներում, նույն թվում նաև Հայաստանի Կոմունիստական պարտիայի XX համագումարում։ Թեզիսների քննարկումը ցույց տվեց, որ մեր երկրի աշխատավորները,— բանվորները, կոլտնտեսականները, ինտելիգենցիան,— Սովետական մեծ Միության բոլոր ժողովուրդները ցնծությամբ ընդունեցին մեր երկրի նոր, հզոր վերելքի յոթնամյա պլանը որպես կոմունիստական շինարարության հոյակապ ծրագիր և բազմաթիվ առաջարկներ ու դիտողություններ արեցին պլանի վերաբերյալ։

Յոթնամյա պլանը հենվում է այն բոլոր նվաճումների վրա, որ ձեռք է բերել մեր երկիրը սովետական կարգերի 41 տարվա իր գոյության ընթացքում։ Մեր երկիրը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ պատմական համեմատաբար կարճ ժամանակաշրջանում տնտեսապես, տեխնիկապես և կուլտուրապես հետամնաց երկրից վերածվեց սոցիալիստական հզոր ինդուստրիայի, խոշոր գյուղատնտեսության, բարձր կուլտուրայի ու գիտության երկրի։ 1958 թ. ՍՍՌՄ արդյունաբերության համախառն արտադրանքը՝ 1913 թ. համեմատությամբ, աճել է 36 անգամ, այդ թվում ժողովրդական տնտեսության զարգացման հիմք հանդիսացող արտադրության միջոցների արտադրությունը աճել է 83 անգամ, մեքենաշինության ու մետաղամշակման արտադրանքը՝ 240 անգամ, էլեկտրաէներգիայի արտադրանքը՝ մոտ 120 անգամ։ Արտադրության միջոցների արտադրության առավել զարգացման հիման վրա մոտ 14 անգամ աճել է թեթև և սննդի արդյունաբերությունը, մեծ չափով զարգացել են սոցիալիստական տրանսպորտի և կապի բոլոր ձևերը։ Աշխատանքի արտադրողականությունն արդյունաբերության մեջ 1958 թ.՝ 1913 թ. համեմատությամբ, բարձրացել է 10 անգամ։ Վերջին տարիներս պարտիայի ղեկավարությամբ վերակառուցվեց արդյունաբերության և շինարարության ղեկավարման սիստեմը, որը հսկայական նշանակություն ունի նրանց հետագա զարգացման համար։ Գյուղատնտեսության ղեկավարման սխալներն ու թերությունները վերացնելու, մեքենատրակտորային կայանները վերակառուցելու հետևանքով մեր սոցիալիստական գյուղատնտեսությունը բռնել է վերելքի ու արագ զարգացման ուղին։ Այդ բոլորի հիման վրա զգալիորեն բարձրացավ սովետական ժողովրդի կենսամակարդակը։ Սովետական իշխանության տարիներին ՍՍՌՄ-ում կատարվել է իսկական կուլտուրական ռևոլյուցիա։ Մեծ չափով զարգացել է սովետական գիտությունը։ Սովետական գիտնականները ցույց տվեցին, որ նրանք ընդունակ են լուծելու ամենարարդ գիտա-տեխնիկական պրոբլեմները։ Սովետական գիտությունը դյուխավորում է համաշխարհա-

[1] «Սովետական Հայաստան», 7 փետրվարի 1959։

յին գիտա-տեխնիկական առաջընթացը և համարձակորեն ուղիներ է հարթում դեպի ապագան։

Հետպատերազմյան տարիներին առաջացած ու սոցիալիստական զարգացման ուղին բռնած ժողովրդա-դեմոկրատական երկրները նույնպես ձեռք են բերել հսկայական նվաճումներ։ Սոցիալիստական երկրների սերտ տնտեսական համագործակցությունը աշխատանքի միջազգային սոցիալիստական բաշխման հիման վրա արագացնում է բոլոր սոցիալիստական երկրների տնտեսական, տեխնիկական և կուլտուրական հետագա վերելքը և հետևաբար նպաստում է նաև ՍՍՌՄ-ի յոթնամյա պլանի կատարման ընթացքի վրա։

ՍՍՌՄ-ի վերոհիշյալ պատմական նվաճումները հիմք տվեցին մեր պարտիային առաջադրելու ավելի երկարատև ժամանակաշրջանի հեռանկարային պլաններ։ Այժմ կպմվում է ՍՍՌՄ-ի զարգացման 15-ամյա պլանը։ Պարտիայի XXI համագումարը հաստատեց յոթնամյա պլանի կոնտրոլ թվերը, որի «հիմնական խնդիրն է ծանր ինդուստրիայի առավել զարգացման հիման վրա տնտեսության բոլոր ճյուղերի հետագա հզոր վերելքը, երկրի տնտեսական պոտենցիալի ղգալի ուժեղացումը այն հաշվով, որպեսզի ապահովվի ժողովրդի կենսական մակարդակի անընդհատ բարձրացումը»։

Յոթնամյա պլանի կատարումով վճռական քայլ կարվի կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ու ՍՍՌՄ-ի հիմնական տնտեսական խնդրի լուծման գործում։

1959—1965 թթ. կոնտրոլ թվերի համաձայն ժողովրդական տնտեսության վճռական և առաջատար ճյուղ հանդիսացող արդյունաբերության համախառն արտադրանքը 1965 թվականին, 1958 թվականի համեմատությամբ, կաճի մոտավորապես 80 տոկոսով, ընդ որում «Ա» խմբի, այսինքն արտադրության միջոցների արտադրությունը կաճի 85—88 տոկոսով, իսկ «Բ» խմբինը, այսինքն սպառման միջոցների արտադրությունը՝ 62—65 տոկոսով։ Այսպիսով, յոթնամյակում ապահովվում է արտադրության միջոցների արտադրության առավել զարգացումը։

Ընթացիկ յոթնամյակում նախատեսված են արդյունաբերության զարգացման ոչ լարված տեմպեր՝ տարեկան 8,6 տոկոս միջին աճով։

Մեր երկրի սև մետալուրգիան յոթնամյակում կկատարի զարգացման մեծ թռիչք, 1965 թ. չուգունի ձուլումը կհասնի 65—70 մլն տոննայի, պողպատինը՝ 86—91 մլն տոննայի, գլանվածքի արտադրանքը՝ 65—70 մլն տոննայի։ Մեծ չափով կաճեն ծանր ինդուստրիայի այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են գունավոր մետալուրգիան, քիմիական արդյունաբերությունը, վառելիքի արդյունաբերությունը, հատկապես նավթի և գազի արտադրությունը, ածխարդյունաբերությունը, էլեկտրաարդյունաբերությունը, անտառային, թղթի և փայտամշակման արդյունաբերությունը։ Յոթնամյակի ընթացքում մեքենաշինության և մետաղամշակման արտադրանքը կաճի մոտ երկու անգամ։ Առանձնապես բարձր տեմպերով կաճեն ծանր մեքենաշինությունը, սարքաշինությունը, ռադիոէլեկտրոնիկայի, էլեկտրատեխնիկական, հաստոցաշինական ճյուղերը։

Հայտնի է այն գնահատականը, որ տվել է Վ. Ի. Լենինը երկրի էլեկտրիֆիկացմանը՝ նշելով նրա դերը կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման գործում։ Ընթացիկ յոթնամյակում մեր երկիրը թևակոխում է համատարած էլեկտրիֆիկացման վճռական ստադիան։ 1965 թվականին էլեկ-

տարէներգիայի արտադրանքը ՍՍՌՄ-ում կհասնի 500—520 միլիարդ կիլովատ-ժամի, այսինքն կավելանա 2,1—2,2 անգամ։ Առանձնապես զարկ կտրվի ջերմաէլեկտրակայանների շինարարությանը, որոնց գործարկումը ավելի արագ կկատարվի, քան հիդրոկայաններինը, միաժամանակ շարունակվելու են մի շարք հիդրոկայանների կառուցման ավարտման աշխատանքները, կառուցվելու են նոր հիդրոկայաններ։

Ծանր արդյունաբերության, հատկապես մեքենաշինության և քիմիական արդյունաբերության զարգացումը անհրաժեշտ պայմաններ կստեղծի ժողովրդական սպառման առարկաների արտադրության նոր վերելքի համար այն հաշվով, որպեսզի յոթնամյակի ընթացքում ապահովվի բնակչության պահանջները գործվածքեղենով, հագուստով, կոշկեղենով և այլ ապրանքներով։ Թեթև արդյունաբերության համախառն արտադրանքը յոթնամյակում կաճի 1,5 անգամ, սննդի արդյունաբերությունը՝ 1,7 անգամ։ Հատուկ ուշադրություն է դարձվելու արդյունաբերական և պարենային ապրանքների ասորտիմենտի ընդլայնմանը և որակի լավացմանը, տնային գործածության առարկաների արտադրության ավելացմանը։

Յոթնամյա պլանի հաջող կատարման և կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման կարևորագույն պայմանն է տեխնիկական անընդհատ պրոգրեսը, նոր տեխնիկայի, կոմպլեքսային մեքենայացման, արտադրության ավտոմատացման լայն արմատավորումը, մասնագիտացումն ու կոոպերացումը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում։ Այս բոլորի հիման վրա ինչպես նաև արդյունաբերության աշխատողների որակավորման, սոցիալիստական մրցման ծավալման, առաջավորների փորձի տարածման հիման վրա աշխատանքի արտադրողականությունը արդյունաբերության մեջ 1959—1965 թթ. կաճի 45—50 տոկոսով, իսկ եթե հաշվի առնենք աշխատանքային օրվա կրճատումը, ապա աշխատանքի արտադրողականությունը դրանից էլ ավելի կլինի։

1959—1965 թթ. յոթնամյակում մեծագույն խնդիրներ են առաջադրված նաև մեր սոցիալիստական գյուղատնտեսության առաջ։

ՍՍՌՄ-ի գյուղատնտեսությունը վերջին տարիներս պարտիայի ու կառավարության միջոցառումների շնորհիվ զարգացման նոր էտապն է թևակոխել և ընթացիկ յոթնամյակում մեր խնդիրն է հասնել գյուղատնտեսական արտադրության այնպիսի աճի, որը հնարավորություն տա բավարարել ՍՍՌՄ-ի բնակչության պահանջները սննդի կարևորագույն մթերքներով, իսկ արդյունաբերությանը՝ հումքով։

Այս խնդիրը պետք է իրագործվի գլխավորապես գյուղատնտեսական բոլոր կուլտուրաների բերքատվության բարձրացման, անասունների գլխաքանակի ավելացման և հանրային անասնաբուծության մթերատվության աճի միջոցով։ Յոթնամյակի ընթացքում գյուղատնտեսության համախառն արտադրանքը ընդհանուր առմամբ ավելանալու է 1,7 անգամ։

Գյուղատնտեսության առաջ դրված այդ մեծ խնդիրների լուծման կարևորագույն պայմանը գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացումն ու էլեկտրիֆիկացումն է, կոլտնտեսություններին և սովխոզներին առաջավոր տեխնիկայով զինելը։ Յոթնամյակի ընթացքում նախատեսվում է արտադրել 1 միլիոնից ավելի տրակտոր, մոտ 400 հազար հացահատիկային կոմբայն և բազմաթիվ այլ գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ։ Կոլտն-

տեսությունները և սովխոզները ավելի լայն չափերով կկիրառեն էլեկտրաէներգիան գյուղատնտեսական արտադրության տարբեր ասպարեզներում։ Յոթնամյակի ընթացքում էլեկտրաէներգիայի սպառումը գյուղատնտեսության մեջ կավելանա մոտ 4 անգամ։

Ջրաշինարարական աշխատանքների լայն ծավալումը, պարարտանյութերի արտադրանքի ավելացումը 1958 թ. 10,6 մլն փթից մինչև 31 մլն փութ, պայքարը գյուղատնտեսական վնասատուների դեմ, գիտականորեն հիմնավորված ագրոտեխնիկայի կանոնների ճիշտ կիրառումը,— այս բոլորը կապահովի գյուղատնտեսության բերքատվության բարձրացումը, առաջին հերթին հացահատիկի արտադրության ասպարեզում, նկատի ունենալով, որ երկրագործության զարգացման գլխավոր դիծը մնում է հացահատիկի արտադրության ավելացումը, որպես գյուղատնտեսական արտադրության հիմքը։ Այս բոլորը պետք է ապահովի յոթնամյակի վերջին տարեկան 10—11 մլրդ փութ հացահատիկի բերքահավաքը։

Սոցիալիստական գյուղատնտեսության հետագա զարգացումը կապված է ոչ միայն նրա տեխնիկա-արտադրական բազայի բարձրացման, այլև սոցիալիստական արտադրահարաբերությունների կատարելագործման հետ, որի հետևանքով ավելի կմերձենան սոցիալիստական սեփականության երկու ձևերը՝ կոլտնտեսային և համաժողովրդական սեփականության ձևերը, ինչպես նշված է XXI համագումարի կողմից ընդունված «Կոնտրոլ թվերում»՝ դա կդրսևորվի «կոլտնտեսային կարգի հետագա զարգացման, արտադրական ֆոնդերի աճի, կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերի ավելացման և դրանց ճիշտ օգտագործման, միջկոլտնտեսային արտադրական կապերի լայնացման մեջ...»։

Յոթնամյակի պլանով նախատեսվում է մեծ չափերով զարգացնել երկրի տրանսպորտն ու կապը։

Առաջիկա յոթնամյակի հոյակապ խնդիրների իրագործումը մեծագույն չափով կախված է շինարարության ծավալումից, մեր երկրի բոլոր շրջաններում և հատկապես արևելյան շրջաններում։ 1959—1965 թթ. պետական կապիտալ ներդրումները կհասնեն մինչև 1,940—1,970 մլրդ ռուբլու, կամ թե 1,8 անգամ ավելի, քան նախորդ յոթնամյակում, այսինքն համարյա թե հավասար կլինեն Սովետական իշխանության գոյության բոլոր տարիներին ժողովրդական տնտեսության մեջ կատարված կապիտալ ներդրումների ծավալին։

Այդ կապիտալ ներդրումների մեծ մասը գործադրվելու է արդյունաբերական և առաջին հերթին ծանր արդյունաբերության շինարարության վրա։ Միաժամանակ մեծ չափով աճելու են նաև կապիտալ ներդրումները գյուղատնտեսության, տրանսպորտի, թեթև և սննդի արդյունաբերության և այլ ճյուղերում։ Բնակարանային և կոմունալ շինարարության վրա նախատեսված է ծախսել հոկայական գումար՝ 375—380 մլրդ ռուբլի։

XXI համագումարը մեծ ուշադրություն հատկացրեց մեր երկրի արտադրողական ուժերի ճիշտ տեղաբաշխմանն ու միութենական ռեսպուբլիկաների զարգացմանը՝ տնտեսական առավել էֆեկտիվությունը և բոլոր ռեսպուբլիկաների էկոնոմիկայի վերելքը ապահովելու տեսակետից։ Յոթնամյա պլանի կոնտրոլ թվերով նախատեսվում է ինչպես միութենական ռեսպուբլիկաների, այնպես էլ խոշոր տնտեսա-աշխարհագրական ռայոնների, ինչպիսիք են

[2] «Պրավդա», 8 փետրվարի 1956։

Ուրալը, Սիբիրը, Միջին Ասիան, Անդրկովկասը և այլն, հետագա մասնագիտացումն ու կոմպլեքսային զարգացումը։ Հայկական ՍՍՌ-ի համար նախատեսվում է քիմիական արդյունաբերության հետագա զարգացումը բնական գազի օգտագործման հիման վրա, ճշգրիտ մեքենաշինության և սարքաշինության, ինչպես նաև թեթև և սննդի արդյունաբերության հետագա զարգացումը, ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության էներգետիկ բազայի ամրապնդումը։ Հայկական ՍՍՌ-ում կապիտալ ներդրումների ծավալը յոթնամյակում կազմելու է 12 միլիարդ ռուբլի, արդյունաբերության համախառն արտադրանքը կավելանա մոտ 2,2 անգամ։ Գյուղատնտեսության ասպարեզում նախատեսվում է խաղողի արտադրանքի ավելացումը 2,8 անգամ, պտուղներինը՝ 2,7, ծխախոտինը՝ 1,2, մսինը՝ 1,7 կաթինը՝ 1,6 անգամ և այլն։

Բուրժուական տնտեսագետները չկարողանալով ժխտել մեր յոթնամյա պլանի հսկայական նշանակությունը, փորձում են ապացուցել, որ այդպիսի մեծ պլանի իրագործումը չի կարող զուգակցվել ժողովրդի կենսական մակարդակի լուրջ բարձրացման հետ։ Նրանք անընդունակ են ըմբռնելու, որ շահագործումից ազատ պլանային սոցիալիստական տնտեսության մեծագույն առավելություններից մեկն էլ այն է, որ բարձր տեմպերին զուգընթաց նա ընդունակ է ապահովելու աշխատավորների կենսամակարդակի արագ և անընդհատ վերելքը։ Ն. Ս. Խրուշչովը պարտիայի XXI համագումարում արված իր զեկուցման մեջ ասել է. «Ժամանակակից պայմաններում, երբ մեր երկրում ստեղծվում են և հաջողությամբ զարգանում են հզոր արդյունաբերություն և խոշոր գյուղատնտեսություն, բոլոր պայմանները կան, որպեսզի սովետական ժողովուրդը ամենամոտ ժամանակներս էլ ավելի լավ ապրի, ավելի լրիվ բավարարելով իր նյութական և հոգևոր պահանջմունքները»։

Աշխատավորության կենսական մակարդակի բարձրացման հիմքը ազգային եկամտի աճն է, որի հիմնական գործոնը աշխատանքի արտադրողականության բարձրացումն է։

Ի տարբերություն կապիտալիզմի, որտեղ աշխատավորների ձեռքով ստեղծված ազգային եկամտի ավելի և ավելի մեծ մասը գնում է շահագործողների ու նրանց պնակալեզների գրպանը, ՍՍՌՄ-ում ազգային եկամուտը ամբողջովին պատկանում է հենց իրենց աշխատավորներին և գործադրվում է նրանց հարաճուն նյութական ու կուլտուրական պահանջների բավարարման և կուտակման, այսինքն ընդլայնված սոցիալիստական վերարտադրության համար։

1959—1965 թթ. յոթնամյակի կոնտրոլ թվերի համաձայն ազգային եկամուտը 1965 թ. կաճի 62—65 տոկոսով, ընդ որում սպառման ֆոնդը ավելանալու է 60—63 տոկոսով։ Յոթնամյակում բանվորների և ծառայողների ռեալ եկամուտները պետք է բարձրանան, մեկ աշխատողի հաշվով, միջին թվով 40 տոկոսով, կոլտնտեսականների ռեալ եկամուտները՝ առնվազն 40 տոկոսով։ Մոտակա տարիներում նախատեսվում է վերացնել ընակչությունից դանձվող հարկերը։ Յոթնամյակում պետք է ավարտվի աշխատավարձի կարգավորումը, ցածր վարձատրվող բանվորների և ծառայողների աշխատավարձի աստիճանական բարձրացումը, ինչպես նաև ծերության կենսաթոշակի նվազագույն չափե-

[1] Ն. Ս. Խրուշչով, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959-1965 թվականների կոնտրոլ թվերի մասին, Հայպետհրատ, 1959, էջ 59։

րի բարձրացումը։ Աշխատանքային օրվա ասիճանական կրճատման շնորհիվ մոտակա տարիներում ՍՍՌՄ-ում կկիրառվի աշխարհում ամենակարճ աշխատանքային օրը և աշխատանքային շաբաթը։ Դա կհանդիսանա սոցիալիզմի մեծագույն հաղթանակներից մեկը կապիտալիստական կարգերի նկատմամբ։

Աշխատավորության կենսական մակարդակի բարձրացման կարևորագույն ցուցանիշներից մեկը ապրանքաշրջանառության ծավալն է, նրա աճը։ Յոթնամյակի ընթացքում պետական և կոոպերատիվ առևտրի ապրանքաշրջանառությունը կաճի մոտ 62 տոկոսով (համադրելի գներով)։ Առանձնապես մեծ չափերով է աճելու կուլտ-կենցաղային և տնտեսական գործունեություն ունեցող ապրանքների վաճառքը, որոնք հեշտացնում են կանանց աշխատանքը։ Զգալիորեն կլավացվի բնակչության կենցաղային և առևտրական սպասարկումը, առողջապահության գործը։

Հայտնի են բնակարանային հարցի լուծման կարևորությունը և այդ ուղղությամբ վերջին տարիներս ձեռնարկված միջոցառումները։ Յոթնամյակի ընթացքում քաղաքներում և բանավաններում կառուցվելու է մոտ 15 միլիոն բնակարան, իսկ գյուղական վայրերում կոլտնտեսականների և ինտելիգենցիայի ուժերով կկառուցվի մոտ 7 միլիոն տուն։

ՍՍՌՄ աշխատավորների կենսամակարդակը դնահատելիս, ինչպես նշեց Ն. Ս. Խրուշչովը պարտիայի XXI համագումարում, չի կարելի աչքաթող անել այնպիսի կարևորագույն փաստը, ինչպիսին է սոցիալիստական պետության կողմից հասարակական սպասարկման համար արվող ծախքերը (սոցիալական ապահովագրություն, կենսաթոշակներ, նպաստներ, կրթություն, առողջապահություն և այլն)։

Հաշված է, որ 1965 թ. նման կարգի ծախսերը ՍՍՌՄ-ում յուրաքանչյուր աշխատողի հաշվով տարեկան կկազմեն 4600 ռուբլի։

ՍՍՌՄ-ի զարգացման յոթնամյա պլանի հաջող կատարումը մեծ չափով կախված է աշխատավորների կոմունիստական դաստիարակությունից, ժողովրդական կրթության, գիտության ու կուլտուրայի զարգացումից։

Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման զուգընթաց պետք է վերափոխվեն նաև մարդիկ, նրանց գիտակցությունը, բարձրանա նրանց կուլտուրական մակարդակը, մարդկանց գիտակցությունից վերացվեն կապիտալիզմի մնացուկները։

Թե ինչպիսի հսկայական նշանակություն է տալիս պարտիան ՍՍՌՄ-ի աշխատավորության կոմունիստական դաստիարակության գործին, երևում է XXI համագումարի այն ցուցումից, որ «աշխատավորների կոմունիստական դաստիարակությունը, մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկների հաղթահարումը պետք է դրվեն պարտիական, սովետական, արհմիութենական, կոմերիտական և մյուս հասարակական կազմակերպությունների ուշադրության ու գործունեության կենտրոնում»։

Հատուկ ուշադրություն պետք է դարձվի երիտասարդ սերնդի կոմունիստական դաստիարակության վրա, դպրոցը, ուսուցումը սերտորեն կապելով արտադրության, կոմունիստական շինարարության պրակտիկայի հետ։

XXI համագումարը ընդգծեց, որ «կոմունիստական հասարակարգի կառուցման ներկա ժամանակաշրջանում ավելի ու ավելի մեծ նշանակություն է ստանում գիտությունը»։ Համագումարը խնդիր դրեց՝ հասնել գիտության բոլոր

ճյուղերի էլ ավելի զարգացմանը, իրագործել գիտա-տեխնիկական հետագա առաջադիմությունն ապահովող տեսական կարևոր հետազոտություններ։ Հատուկ նշանակություն և կարևորություն են ստանում գիտության այնպիսի ճյուղերը, ինչպիսիք են ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունները, քիմիան, բիոլոգիան, որոնց զարգացումը և կապը պրակտիկայի հետ մեծագույն նշանակություն ունի յոթնամյա պլանի կատարման, կոմունիստական շինարարության համար։

Մեծ խնդիրներ են ծառանում նաև հասարակական գիտությունների ներկայացուցիչների առջև, որոնք իրենց աշխատություններում պետք է ընդհանրացնեն հասարակության զարգացման օրինաչափությունները, սոցիալիստական շինարարության հարուստ պրակտիկան և մշակեն սոցիալիզմից կոմունիզմին անցնելու օրինաչափությունների պրոբլեմները։ Այստեղ առաջին պլանի վրա է քաշվում տնտեսագիտությունը, որը պետք է սերտորեն կապվի ժողովրդական տնտեսության պլանավորման զարգացման կոմունիստական շինարարության պրակտիկայի հետ, օգնի պրակտիկային լուծելու կյանքի կողմից առաջ քաշված նոր խնդիրները։ Հասարակական գիտությունները մարքսիզմ-լենինիզմի դիրքերից խորը, գիտականորեն հիմնավորված վճռական ու հարձակողական պայքար պետք է ծավալեն բուրժուական, ռեֆորմիստական ու ռևիզիոնիստական իդեոլոգիաների ամեն ձևի դրսևորումների դեմ։

Ընթացիկ յոթնամյակում զգալիորեն կլայնանա գիտական հիմնարկների ցանցը, հատկապես երկրի արևելյան ռայոններում, լայն զարգացում կստանան գրականությունն ու արվեստը, կինոն, մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը։

* * *

1959—1965 թթ. յոթնամյա պլանով մեր երկիրը անցում է կատարում ծավալուն կոմունիստական շինարարության, կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման կարևորագույն էտապին։ Յոթնամյա պլանը միաժամանակ նշանակում է կապիտալիզմի հետ սոցիալիզմի մրցությունն նոր և վճռական էտապ։ Սովետական Միությունը իր յոթնամյա պլանով կապիտալիստական աշխարհին առաջարկում է մրցելու տնտեսական, կուլտուրական, ժողովրդի կենսամակարդակի բարձրացման խաղաղ ասպարեզներում։

Յոթնամյա պլանի կատարման հետևանքով ՍՍՌՄ-ի բնակչության մի շնչի հաշվով կարտադրվի ավելի շատ արդյունաբերական ապրանք, քան Եվրոպայի առավել զարգացած կապիտալիստական երկրներում։ Յոթնամյակի վերջում Սովետական Միությունը արդյունաբերության արտադրության ամենագլխավոր տեսակների բացարձակ ծավալով կմոտենա ԱՄՆ-ի արտադրության ներկա մակարդակին, իսկ ամբողջությամբ վերցրած և բնակչության մի շնչին ընկնող գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ կգերազանցի ԱՄՆ-ի ժամանակակից մակարդակը։ Ռեալ հաշվարկումները ցույց են տալիս, որ 1965 թ. ՍՍՌՄ արդյունաբերական արտադրանքի մակարդակի տեսակետից կհասնի ԱՄՆ-ի արդյունաբերության ներկա մակարդակի մոտ 95—99 տոկոսին, իսկ մոտավորապես հինգ տարի հետո, 1970 թ. կգերազանցի ԱՄՆ-ի արտադրությունը ինչպես բացարձակապես, այնպես էլ մի շնչին ընկնող արտադրանքի տեսակետից։ Դրանով իսկ Սովետական Միությունը կրոնի աշխարհում առա-

ջին տեղը ոչ միայն արտադրության բացարձակ ծավալով, այլև մի շնչին ընկնող արտադրանքի տեսակետից։ Սա նշանակում է ՍՍՌՄ-ի հիմնական տնտեսական խնդրի լուծումը և «դա սոցիալիզմի համաշխարհային պատմական հաղթանակը կլինի կապիտալիզմի հետ խաղաղ մրցության մեջ», ասված է պարտիայի XXI համագումարի բանաձևում։

Լուծելով իր հիմնական տնտեսական խնդիրը, մեր երկիրը կհասնի տնտեսական զարգացման այն մակարդակին, որին հասել է կապիտալիստական ամենազարգացած երկիր ԱՄՆ-ը։ Սակայն այդ մակարդակը մեզ համար կլինի ոչ թե վերջնական սահմանը, այլ այն սահմանագիծը, որին հասնելուց հետո ՍՍՌՄ-ը, շարունակելով իր հաղթական առաջընթացը, ընդհուպ կմոտենա սոցիալիզմից կոմունիզմին անցնելուն։

ՍՍՌՄ-ում հիմնական տնտեսական խնդրի լուծման վերաբերյալ մեր հաստատ համոզմունքը հենվում է մեր զարգացման պատմական անցյալ փորձի վրա, սոցիալիստական տնտեսության մեծագույն առավելությունների, նրա անհամեմատ բարձր տեմպերի վրա կապիտալիստական տնտեսական սիստեմի համեմատությամբ։

Համաշխարհային սոցիալիստական սիստեմը ակնհայտ կերպով ապացուցել է իր մեծագույն առավելությունները կապիտալիստական սիստեմի նկատմամբ։ Վերջին հինգ տարում (1954—1958) սոցիալիստական լագերի երկրների արդյունաբերական արտադրության միջին տարեկան աճը կազմեց 11 տոկոս, մինչդեռ ամբողջ կապիտալիստական աշխարհի արդյունաբերական արտադրության միջին տարեկան աճը 3 տոկոսից էլ պակաս էր։ Սոցիալիստական երկրների սերտ տնտեսական համագործակցությունը մեծ չափով արագացնում է նրանց զարգացումը և ավելի ցայտուն դարձնում սոցիալիզմի մեծագույն առավելությունները կապիտալիզմի նկատմամբ։ Յոթնամյակի վերջում սոցիալիզմի համաշխարհային սիստեմի երկրները կարտադրեն համաշխարհային արդյունաբերական արտադրանքի կեսից ավելին ու դրանով իսկ կապահովվի սոցիալիզմի համաշխարհային սիստեմի գերակշռումը կապիտալիստական համաշխարհային սիստեմի նկատմամբ։ «Սոցիալիստական յուրաքանչյուր երկրի աճն ու զարգացումը, ասել է Ն. Ս. Խրուշչովը, տանում են դեպի ամբողջ սոցիալիստական համաշխարհային սիստեմի ամրապնդումը։ Դրանումն է մեր ուժը, սոցիալիզմի գալիք հաղթանակների երաշխիքը կապիտալիզմի հետ խաղաղ մրցության մեջ»։

* * *

XXI համագումարի նշանակությունը մեծ է նաև նրանով, որ ինչպես ընկեր Ն. Ս. Խրուշչովի զեկուցման մեջ, այնպես էլ համագումարի որոշումներում մի շարք ակտուալ տեսական հարցեր են բարձրացվել սոցիալիզմից կոմունիզմին անցնելու օրինաչափությունների վերաբերյալ, հարցեր, որոնք նշանակում են մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի հետագա զարգացումը։

Սոցիալիզմից կոմունիզմին անցնելու օրինաչափությունների վերաբերյալ տեսական նոր եզրակացությունները հանգում են հետևյալ հիմնական հարցերին։

1. Սոցիալիզմից կոմունիզմին անցնելը պատմական օրինաչափ պրոցես է, որը չի կարելի կամայականորեն խախտել կամ շրջանցել։ Սոցիալիզմի և կոմունիզմի միջև չկա նրանց բաժանող ինչ-որ պատնեշ. կոմունիզմը հանդիսա-

նում է սոցիալիզմի ուղղակի շարունակությունը և սոցիալիզմից կոմունիզմին անցնելը տեղի կունենա արագացված տեմպերով, սակայն չի կարելի շտապել և հապճեպորեն մտցնել այն, ինչ դեռ չի հասունացել, ինչպես և չի կարելի կանգ առնել ձեռք բերածի վրա։

2. Ներկայումս մեր երկրի գործնական խնդիրը կոմունիստական հասարակարգի նյութա-տեխնիկական բազայի ստեղծումն է, սոցիալիստական արտադրողական ուժերի նոր, հզոր վերելքը։ Արտադրողական ուժերի բուռն զարգացման համեմատ պետք է կատարելագործվեն նաև սոցիալիստական արտադրահարաբերությունները, որպես արտադրողական ուժերի զարգացման կարևորագույն խթաններ։

3. Սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանի տնտեսական օբյեկտիվ պայմանները պահանջում են բաշխումը կատարել ըստ աշխատանքի։ Սակայն բաշխման ասպարեզում նկատի պետք է ունենալ նաև այն հսկայական ծախսերը, որ սոցիալիստական պետությունը կատարում է աշխատավորների հասարակական կարիքների համար և որոնք հանդիսանում են ապագա կոմունիստական բաշխման նախատիպը։ Ըստ աշխատանքի բաշխելու սոցիալիստական սկզբունքից ըստ պահանջմունքների բաշխելու կոմունիստական սկզբունքին անցնելը կարելի է իրագործել միայն այն ժամանակ, երբ արտադրողական ուժերի զարգացումը կհասնի անհամեմատ բարձր մակարդակի, երբ ձեռք կբերվի սպառման բոլոր մթերքների առատություն։

4. Կոմունիստական շինարարության խնդիրների մեջ տեսական ու գործնական մեծ նշանակություն է ստանում սոցիալիստական սեփականության երկու ձևերի՝ համաժողովրդական և կոլտնտեսային սեփականության ձևերի զարգացման ու մերձեցման ուղիների հարցը։ Կոլտնտեսային սեփականության մերձեցումը համաժողովրդականին տեղի կունենա. ա) կոլտնտեսությունների անրաժանելի ֆոնդերի անշեղ աճի միջոցով, բ) կոլտնտեսությունների հանրային արտադրության բազմակողմանի զարգացման շնորհիվ, որի հետևանքով աստիճանաբար կվերանա կոլտնտեսականների անձնական տնտեսության անհրաժեշտությունը, գ) ավելի լայնորեն կզարգանան միջկոլտնտեսային արտադրական կապերը, դ) գյուղատնտեսական արտադրության էլեկտրիֆիկացման, մեքենայացման ու ավտոմատացման հետևանքով գյուղատնտեսական աշխատանքը աստիճանաբար կվերածվի ինդուստրիալ աշխատանքի տարբերակի։

Այսպիսով, սոցիալիստական սեփականության երկու ձևերի մերձեցումը, ինչպես ասում է Ն. Ս. Խրուշչովը, «քաղաքի և գյուղի միջև գոյություն ունեցող էական տարբերությունը հաղթահարելու խոր պրոցեսի լուծում է»։

5. Կոմունիստական շինարարության ներկա էտապում առանձնակի նշանակություն է ստանում սոցիալիստական պետության ֆունկցիաների փոփոխման, նրա մահացման հարցը, որը «սոցիալիստական պետականությունը կոմունիստական հանրային ինքնավարության վերածելու հարց է»։ Սոցիալիստական պետության զարգացումը ընթանում է պրոլետարական, աշխատավորական դեմոկրատիզմի ծավալման ուղղությամբ։ Դրա հետ համընթաց պետական օրգանների մի շարք ֆունկցիաներ աստիճանաբար պետք է անցնեն հասարակական կազմակերպություններին։ Այդ, իհարկե, չի նշանակի սոցիալիս-

[1] Նույն տեղում, էջ 144։
[2] Նույն տեղում, էջ 145։

տական պետության թուլացումը, այլ, ընդհակառակը, ավելի կամրապնդի այն, հնարավորություն տալով, պետությանը ավելի մեծ չափով իր ուշադրության կենտրոնը դարձնել կոմունիստական տնտեսական շինարարության հարցերը, պայքարը խաղաղության համար, պետական անվտանգության օրգանների, զինված ուժերի ամրապնդումը և կատարելագործումը՝ ջախջախիչ հակահարված հասցնելու ամեն մի ագրեսորի, որը կփորձի խախտել մեր պետության, սոցիալիզմի մյուս երկրների սահմանները ու շահերը։

6. XXI համագումարը հանգեց նաև մի այլ տեսական և գործնական հսկայական նշանակություն ունեցող եզրակացության։ Խոսքը վերաբերում է նրան, թե արդյոք սոցիալիստական երկրները կոմունիզմին կանցնեն հաջորդաբար, թե այդ անցումը կիրագործվի միաձայնաբար ու հիմնականում միաժամանակ։ «Տեսականորեն ավելի ճիշտ կլիներ ենթադրել, ասում է ընկեր Խրուշչովը, որ սոցիալիզմի երկրները, հաջողությամբ օգտագործելով սոցիալիստական կարգերի հնարավորությունները, այս կամ այն չափով միաժամանակ կթևակոխեն կոմունիստական հասարակարգի բարձրագույն փուլը»[6]։

Ն. Ա. Խրուշչովի և XXI համագումարի կողմից բարձրացված վերոհիշյալ տեսական հարցերը պետք է գտնվեն հասարակական գիտությունների ասպարեզում աշխատողների՝ փիլիսոփաների, տնտեսագետների, պատմաբանների, իրավաբանների ուշադրության կենտրոնում։

* * *

ՍՍՌՄ-ի յոթնամյա պլանի առաջադրումը շփոթ առաջացրեց կապիտալիստական երկրների ռեակցիոն շրջաններում։ Այդ ռեակցիոն շրջանները սկսել են բարբաջել յոթնամյակի «վտանգավոր» լինելու մասին կապիտալիստական երկրների համար, իսկ նրանց ամենաագրեսիվ ներկայացուցիչները նորից կոչեր են անում ռազմական ծախսերի ավելացման ուղղությամբ։ Թե ինչպիսի նշանակություն է տրվում կապիտալիստական երկրներում ՍՍՌՄ յոթնամյա պլանին, դա, օրինակ, պարզ է դառնում նրանից, որ դեռ Ն. Ս. Խրուշչովի թեզիսների հրապարակման կապակցությամբ արգենտինյան «Նոեստրա պալաբրա» թերթը գրում էր. «Թեզիսներ, որոնք ցնցեցին ողջ աշխարհը», հնդկական «Էկոնոմիկ ուիկլու» ամսագիրը գրում էր. «Ամենահամարձակ պլանը այն բոլորից, որ երբևիցե առաջադրվել է Սովետական Միության կողմից» և այլն։

Մեր պարտիան և Սովետական կառավարությունը միշտ էլ հետևողականորեն վարել և վարում են խաղաղության քաղաքականությունը։ XXI համագումարը նորից իր ամբողջ ուժով առաջ քաշեց երկու սիստեմների խաղաղ գոյակցության քաղաքականությունը։ Մի երկիր, որ առաջ է քաշել իր խաղաղ զարգացման այնպիսի հոյակապ ծրագիր, ինչպիսին է ՍՍՌՄ յոթնամյա պլանը, չի կարող շահագրգռված լինել պատերազմի մեջ։ Այդ արդեն սկսում են հասկանալ իմպերիալիստական աշխարհի շատ, նույնիսկ ռեակցիոն գործիչները։

Սովետական Միության Կոմունիստական պարտիան՝ մեր հասարակության զարգացման ոգեշնչողն ու կազմակերպիչը, առաջադրելով մեր երկրի զարգացման նոր հոյակապ պլանը, բուռն էնտուզիազմ առաջ բերեց ամբողջ սովետական ժողովրդի մեջ։ Մեր մեծ Հայրենիքի բոլոր աշխատավորները ավելի

[6] Նույն տեղում, էջ 153։

և ավելի համախմբվելով Կոմունիստական պարտիայի, նրա լենինյան Կենտրոնական Կոմիտեի շուրջը, իրենց վճռականությունն են հայտնում կատարելու և գերակատարելու կոմունիզմի կառուցման պլանը։ Ավելի և ավելի լայն ծավալ է ստանում աշխատավորների մեջ սոցմրցումը, որը նոր, ավելի բարձր ձևեր է առաջադրում, ինչպիսիք են կոմունիստական աշխատանքի բրիգադաները։ ՍՍՌՄ արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի, գյուղատնտեսության աշխատավորները, այդ թվում նաև Հայաստանի աշխատավորները, պարտավորություններ են ստանձնում յոթնամյա պլանը ժամկետից շուտ կատարելու մասին։ Սկսվել է մի մեծ համաժողովրդական շարժում յոթնամյա պլանը կատարելու և գերակատարելու համար. դրանով վճռական քայլ կարվի կոմունիստական հասարակարգի կառուցման գործում։

Մեր պարտիայի XXI արտահերթ համագումարը կգրվի պատմության էջերում որպես կոմունիզմ կառուցողների համագումար։